

սաստանի մասմետականութիւնը ունենայ իր առանձին պատուիրակութիւնը :

Օգոստոսին Քազանի մէջ կրկին կը հաւաքուէին մասմետականութեան ներկայացուցիչները : Երեք մասմետական համառուսական Քօնգրէներ կը զուամարուէին զուգահեռաբար .

1) Ռուսաստանի Մասմետականներու Երկրորդ Համագումարը . 2) Ռուսաստանի Մասմ . Կղերականութեանը եւ 3) Զինուորական Քօնգրէն :

Այս համագումարները կ'որոշէին՝ առանց սպասելու Ռուսիոյ Սահմանադիր ժողովի գումարուելուն անմիջապէս ձեռնարկել իրականացնելու ազգային ինքնորոշման իրաւունքը :

Մասմետական համառուսական Քօնգրէին յանձնարարուեցաւ ինքնավարութեան օրգաններ կազմակերպել առանձին երկիրներուն համար , իսկ Զինուորներու Քօնգրէին՝ ձեռնարկել Մահմետական Բանակի մը կազմութեան :

Քերենսկիի կառավարութիւնը ջանալով արգելել մասմետականներու զինուորական համագումարը պէտք էր սպասել , որ ան պիտի հակառակէր նաեւ , եւ մանաւանդ , բանակի մը կազմութեան : Նախատեսելով այս պարագան որոշուեցաւ չեմքարկուիլ կառավարութեան , որովհետեւ իսլամը պէտք ունի զինեալ զօրութեան (Տէ՛ս Die Kongresse der Mohammedaner Russlands in Kazan, Von H. Altdorffer, Der Neue Orient, Band II, Nummer 1, Oct. 1917).

Միւս կողմէ հարցը մինչեւ զինեալ բաղխումի չտանելու համար անոնք պատրաստակամութիւն յայտնեցին իրենց ոյժերը տրամադրել ժամանակակտոր Կառավարութեան ընդդէմ հակա-յեզապիտութեան :

Այս որոշումներով , ինչպէս կ'ըսէր Altdorffer վերը յիշատակուած յօդուածին մէջ «Մոսկուայի Քօնգրէսէն իվեր մեծ քայլ մ'առած էր Իսլամը : Այն ատեն ան կ'ուզէր համընթաց քայլել ժամանակակտոր Կառավարութեան հետ , իսկ այժմ կ'ուզէր Մասմանադիր ժողովը զնել կատարուած իրողութեան առջեւ : Այն ատեն միայն Կովկասն էր ,որ կը պահանջէր մասմետական երկիրներու կատարեալ ինքնիշխանութիւնը , հիմա բոլորը կը պահանջէին զայն : Այն ատեն դեռ կը յուսային խաղաղու-

թեամբ լուծել հարցը Ռուսերուն հետ . հիմա զինեալ ոյժի վրայ կոթնիլ կ'ուզէին . . . »

\* \* \*

Այս ծրագիրներու վերջնական յաջողութենէն առաջ , սակայն , տեղի ունեցաւ Բոլշեւիկեան պետական հարուածը , 1917 Նոյեմբերի սկիզբը : Ասոնք նախ եւ առաջ նպաստաւորեցին ազգայնական շարժումը Ռուսաստանի այլազգի ժողովուրդներուն մէջ «ինքնորոշման իրաւունքի» իրենց նշանաբանով : Շուտով սակայն պիտի ճնշէին այդ ձգտումները համայնավար Ֆրազարանութեան ձեռնոցին տակ ծածկուած պողպատեայ ձեռքերով :

Ներքին Ռուսաստանի եւ Սիբերիոյ թրքական ժողովուրդները ազգային-կուլտուրական ինքնավարութիւն մը հաստատեցին Նոյ . 1917 ին : Փեթերսբուրգէն մինչեւ Վլադիվոսթոք ամբողջ երկիրը բաժնած էին «անձնական» վիլայէթներու , որ պիտի կառավարուէին երեք հողինոց խորհուրդներու կողմէ : Նահանգային Սորհուրդներու ներկայացուցիչները Գեկտեմբերի սկիզբը Ուֆայի մէջ զուամարեցին «Ազգային Մէջլիս» մը , որ վաւերացնելէ վերջ Ազգ . Մասմանադրութիւնը , Ուֆայի մէջ կազմեց կեդրոնական կառավարութիւն մը , որ կը բաղկանար կրօնի , կրթութեան եւ էլեւմտական նախարարութիւններէ :

Հազիւ թէ գործը զլուս բերուած էր , երբ Բաշքերները ուզեցին առանձինն կազմակերպուիլ իբր ազգային-Բաշքեր Թերրիթօրիա : Ատոր վրայ Թաթարներն ալ ուզեցին սեփական պետութիւն ունենալ Բաշքերներուն հետ միանալով , որովհետեւ իրենք սեփական թերրիթօրիա չունին : 1918 1 Մարտին տեղի պիտի ունենար Թաթար-Բաշքերական կամ ինչպէս իրենք կը կոչէին «Իգիլ-Ուրայեան» պետութեան յայտարարութիւնը :

Յունուարին Քազանի մէջ հաւաքուեր էր Համառուս . Մասմետական Զինուորական Քօնգրէն իր ոյժով նեցուկ կանգնելու այդ աքթին : Փետրուարի վերջը բոլոր նախապատրաստական աշխատանքները կատարուած էին արդէն : Եւ ահա՛ հասան Բոլշեւիկները :

Բազմաթիւ զեկավար անձնաւորութիւններ (զինուորական թէ քաղաքային) ձերբակալելով ու արսորելով անոնք ձախողեցուցին թրքո-